ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՍՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅՈԼՈՄ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 15 - 16 (16410) ՇԱԲԱԹ, 27 ՓԵՏՐՎԱՐԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ Է»

«Մենք աշխատում ենք, որպեսզի առավել արդյունավետ ծախսենք պետական ռեսուրսներից յուրաքանչյուր թեթրին, որ ուղղված են մարդկանց զբաղվածության հարցի լուծմանը»:

Այդ մասին, Զուգդիդիի Շոթա Մեսխու անվան պետական ուսումնական համալսարանի մասնագիտական ծրագրերի ուսանողների հետ հանդիպմանը, հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

Վարչապետի հավաստմամբ, կրթական ոլորտի բարեփոխումը կառավարության գլխավոր առաջնահերթություններից է:

Ինչպես նշեց վարչապետը, ներկայումս երկրի բուհերը հիանալի օրինակ են դարձել բարձրագույն եւ մասնագիտական կրթության համակցման համար, ինչը թույլ կտա որոշակիորեն կարգավորել երիտասարդների զբաղվածության հարցը:

ԱՅՑ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԷԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԸ

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Չեխիայում: Այցի շրջանակներում, Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպում ունեցավ Չեխիայի վարչապետ Բոհուսլավ Սոբոտկայի հետ:

Կողմերը քննարկեցին երկու երկրների միջեւ քաղաքական եւ տնտեսական հարաբերությունները: Առանձնակի ուշադրություն հատկացվեց տնտեսական հարաբերությունների ամրապնդման հեռանկարներին: Երկու երկրների վարչապետները խոսեցին առեւտրի ու ներդրումների, տրանսպորտի, էներգետիկայի, բնապահպանության, գյուղատնտեսության, մտավոր սեփականության պաշտպանության եւ այլ ոլորտներում համագործակցության խորացման հնարավորությունների մասին:

Չեխիան աջակցում է Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու օրակարգին եւ պատրաստ է օգնել այդ երկրին նշված նպա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՔՆՆԱՐԿՎԵՑ ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Փետրվարի 23-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ Հարավային Կովկասում ԵԱՀԿ հատուկ ներկայացուցիչ Գյունտեր Բեհլերի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակին եւ այդ տեսանկյունից տարածաշրջանում անվտանգության առումով ստեղծված իրադրությունը: Հանդիպմանը կողմերը առնչվեցին նաեւ Ժնեւի բանակցությունների ձեւաչափի թեմային: ԵԱՀԿ առաքելությունը որպես վերոնշյալ ձեւաչափի մասնակից, կրկին անգամ ընդգծեց այդ բանակցությունների կարեւորությունը: Առաքելությունը մտահոգություն հայտնեց Ռուսաստանի կողմից Հարավային Օսեթիայի եւ Աբխազիայի հետ ձեւակերպված այսպես կոչված, համաձայնագրերի կապակցությամբ:

Հանդիպմանը մասնակցեցին նաեւ Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի նախագահը, Վրաստանի նախագահի աշխատակազմի ղեկավարը եւ նախագահի խորհրդականները:

ՆԻՆՈԾՄԻՆԴԱ

ՍՄԲԱՏ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ. «ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ, ՎԵՐՋԱՊԵՍ ԼՈՒԾԵՑԻՆՔ ԹԻՔՔԱՐԻ ՉԱՐԱԲԱՍՏԻԿ ՎԵՑ ԿԻԼՈՄԵՏՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ»

Այս տարվա ծմռանը «Վրաստան» թերթը պարբերաբար անդրադարձել է Վրաստանի ավտոմոբիլային ճանապարհներով երթեւեկության հետ կապված հիմնախնդիրներին:

Գրեթե բոլոր հաղորդագրություններում, Ստեփանծմինդա-Լարս ճանապարհահատվածի հետ միասին հիշատակվում էր նաեւ Ծալկա-Նինոծմինդա ավտոճանապարհի Նարդեւան-Թիքքար-Ռոդիոնովկա ճանապարհահատվածը: Ռելիեֆային բարդություններով հայտնի այդ հատվածը, որը գտնվում է ծովի մակարդակից 2200 մետր բարձրության վրա, սովորաբար փակվում է ձնահյուսքերի կամ առատ ձնատեղումների արդյունքում եւ այդպես փակված վիճակում մնում մինչեւ ապրիլի սկզբները: Եվ դա տեղի է

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՆԱՐՀՎԱԾ ԴՐՈՇՆԵՐ. ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ը՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲՌՆԱԶԱՎԹՄԱՆ ՕՐ

Փետրվարի 25-ին վերջին տարիներին ստեղծված ավանդույթի համաձայն, Վրաստանի խորհրդայնացման օրվա առթիվ, իջեցվեցին երկրի վարչական բոլոր շենքերի դրոշները:

Վրաստանի խորհրդային բռնազավթման 95-րդ տարելիցի օրը, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին, ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրմա Իմերլիշվիլին, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչներն Վրաստանի խորհրդայնացման 95-րդ տարելիցի օրը այցելեցին Վրաստանի անկախության համար զոհված յունկերների հուշահամալիրը, ծաղկեպսակ դրեցին հերոսների շիրիմներին:

«95 տարի առաջ՝ 1921 թվականին, մեր նախնիները պայքար սկսեցին խորհրդային կայսրությունից Վրաստանի ազատագրման համար: 70 տարի անց, մեր սերնդին հաջողվեց հաղթել այդ պայքարում եւ հիմնել անկախ Վրաստան: Այսօր մենք պայքարում ենք անկախությունից ազատության ձեռքբերման համար եւ միասին այդ պայքարում կհաղթենք»,- հայտարարեց նախագահը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԹԵՆԳԻԶ ՇԱՐՄԱՆԱՇՎԻԼՈՒ ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլին, դիվանագիտական առաքելության ժամկետի սպառման կապակցությամբ շարունակում է հանդիպումները Հայաստանում:

Փետրվարի 24-ին նա հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի հետ:

Դիվանագետի հրաժեշտի հանդիպումները շարունակվում են:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ. «ՄԵՆՔ ՎՐԱՍՏԱՆԻՆ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼ 500 ՄԻԼԻՈՆ ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵՏՐ ԻՐԱՆԱԿԱՆ ԳԱԶ»

Հայաստանը կարող է Վրաստան տարանցիկ փոխանցել 500 միլիոն խորանարդ մետր իրանական գազ:

Այդ մասին Հայաստանի Ազգային ժողովում հայտարարեց Հայաստանի էներգետիկայի եւ բնական ռեսուրսների նախարար Երվանդ Զախարյանը: Նրա խոսքերով, այդ հարցերը ներկա փուլում գտնվում են Հայաստանի, Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ տարվող բանակցային գործընթացում, եւ վերջնական որոշումը դեռեւս չի ընդունվել:

«Ներկայումս գործող Իրան-Հայաստան գազամուղն այսօրվա դրությամբ շահագործվում է ընդամենը 15-20 տոկոսով, սակայն մենք Վրաստանին կարող ենք տարանցիկությամբ փոխանցել 500 միլիոն խորանարդ մետր իրանական գազ»,- հայտարարեց Երվանդ Զախարյանը:

ԱՅՑ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԷԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տակին հասնելու համար: Չեխիան նաեւ ընդգծում է Վրաստանի եւ Եվրամիության միջեւ տնտեսական, քաղաքական ուղղություններով մերձեցման գործի հաջողությունը: Այդ մասին հայտարարեց երկրի վարչապետ Բոհուսլավ Սոբոտկան Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հետ հանդիպումից հետո: Նրա խոսքով, Վրաստանը շատ պատասխանատու է մոտենում ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցին: «Երկրում կյանքի են կոչվում ժողովրդավարական բարեփոխումներ, որը կարեւոր նախապայման է Եվրաատլանտյան կառույցին անդամակցելու համար»,- ասաց նա:

Գիորգի Կվիրիկաշվիլին Չեխիայի վարչապետին հրավիրեց այցելել Վրաստան:

Այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը հանդիպում ունեցավ նաեւ Չեխիայի նախագահ Միլոշ Զելմանի, առեւտրի եւ արդյունաբերության նախարար Յան Մլադեկի, Չեխիայի խորհրդարանի Պատգամավորների պալատի նախագահ Յան Համաչեկի, ինչպես նաեւ չեխական Սենատի նախագահ Միլան Շտեխի հետ:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՀԱԱԳԱՅԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՒՏ ԻՐԱՎԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ Է»

Ինչպես Վրաստանում, այնպես էլ Ռուսաստանում, բոլորը հստակորեն պետք է գիտակցեն՝ Հաագայի հետաքննությունը զուտ իրավական ընթացակարգ է, եւ դրան քաղաքական ոչ մի որոշում արգելակել չի կարող:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին՝ մեկնաբանելով տեղեկատվությունն այն մասին, ըստ որի, Ցխինվալիի դե-ֆակտո իշխանության ղեկավար Լեոնիդ Թիբիլովը այսպես կոչված խորհրդարանին հանձնարարել է քայլեր ձեռնարկել, որպեսզի ռուսական դուման ճանաչի Վրաստանի կողմից օսերի ցեղասպանության հարցը:

Թեա Ծուլուկիանու հավաստմամբ, փաստերը հստակորեն հաստատում են, որ օգոստոսյան պատերազմի ժամանակ տեղի է ունեցել վրացիների էթնիկական զտումը:

ՎՐԱՍՏԱՆ-ՉԻՆԱՍՏԱՆ

ՄԻՆՉԵՎ ՏԱՐԵՎԵՐՋ ԿԱՆՑՆԵՆ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ

Փետրվարի 23-ին, Թբիլիսիի «Քորթիարդ Մարիոտ» հյուրանոցում, սկսվեց Վրաստանի եւ Չինաստանի միջեւ ազատ առեւտրի շուրջ բանակցությունների առաջին փուլը:

Բանակցությունների ավարտից հետո, Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման փոխնախարար Գենադի Արվելաձեն հայտարարեց, որ Վրաստանը մինչեւ տարեվերջ կարող է Չինաստանի հետ ազատ առեւտրի մասին համաձայնագիր ստորագրել: Իր հերթին, Չինաստանի առեւտրի նախարարության խորհրդական Լյու Յույհուան նշեց, որ ազատ առեւտրի մասին առաջիկա համաձայնագիրը կարեւոր իրադարձություն կլինի երկու երկրների հարաբերություններում:

Չինաստանի հետ ազատ առեւտրի համաձայնագրի ձեւակերպման հարցի շուրջ բանակցություններ սկսելու մտադրության մասին հուշագիրը Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Դմիտրի Քումսիշվիլին ստորագրել է 2015 թվականի դեկտեմբերին Չինաստան կատարած աշխատանքային այցի ժամանակ:

Ազատ առեւտրի համաձայնագրի ձեւակերպումն զգալիորեն կավելացնի Վրաստանից Չինաստան կատարվող արտահանումը, այդ թվում՝ նաեւ գինու արտահանումը, նշել է Վրաստանի էկոնոմիկայի նախարարը:

Չինական կողմի հետ պայմանագրի վերջնական ստորագրումից հետո, Վրաստանը հատուկ արտոնյալ առեւտրական ռեժիմ (արտոնյալ առեւտրական ռեժիմներ) կունենա մի շարք երկրների հետ, որոնց ընդհանուր բնակչությունը գերազանցում է 2 միլիարդ 200 միլիոնը:

ՆԻՆՈԾՄԻՆԴԱ

ՍՄԲԱՏ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ. «ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ, ՎԵՐՋԱՊԵՍ ԼՈՒԾԵՑԻՆՔ ԹԻՔՔԱՐԻ ՉԱՐԱԲԱՍՏԻԿ ՎԵՑ ԿԻԼՈՄԵՏՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ունենում գրեթե ամեն տարի: Այս տարի վերոնշյալ ճանապարհահատվածը կրկին փակվեց, թեպետ...

Օրերս ծանոթներիցս մեկն ասաց, որ փետրվարի 22-ին Նինոծմինդայից Թիքքարի ճանապարհով Թբիլիսի է եկել, որ ճանապարհը բաց է:

Չհավատացինք ու հեռախոսով կապվեցինք Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանի հետ:

- Իրոք, դա ճիշտ է: Մի զարմացեք, այո', ճանապարհը բաց է,- հեռախոսով ասաց Սմբատ Կյուրեղյանը եւ հավելեց.

- Գրեթե ամեն տարի, ձնատեղումների ժամանակ Նինոծմինդայից Թբիլիսի ուղեւորությունը հիմնախնդրային էր դառնում: Դրա պատճառը Ռոդիոնովկա-Նարդեւան վեց կիլոմետրանոց ռելիեֆային բարդություն ունեցող ճանապարհահատվածն էր, այսպես կոչված, Թիքքարի «պերեւալը»: Տարիներ շարունակ, այդ հատվածում առաջացած բարդությունների պատճառով մեր տարածաշրջանը կտրվում էր երկրից՝ հիմնախնդիրներ առաջացնելով տեղի բնակիչների համար: Բավական է նշել, որ ճանապարհի փակման պատճառով հիմնախնդիրներ են ծագում մայրաքաղաքի, երկրի մյուս քաղաքների շուկաներ ապրանքների դուրսբերման, անհրաժեշտության դեպքում ծանր հիվանդներին մայրաքաղաքի կլինիկաներ տեղափոխելու, կենսական կարեւորության այլ հարցերում:

Բնականաբար, հարցը միշտ գտնվել է մեր ուշադրության կենտրոնում, թեպետ միշտ չէ, որ հնարավորություն ենք ունեցել դրա կարգավորման համար: Այս տարի հիմնախնդիրը լուծվեց: Մեր մունիցիպալիտետից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը այդ եւ այլ հիմնախնդիրների հարցով հատուկ հանդիպում ունեցավ Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Նոդար Ջավախիշվիլու հետ: Արդյունքում, կենտրոնական բյուջեից հատկացվեց նշանակալի գումար այդ հիմնախնդրային ճանապարհահատվածում անխափան երթեւեկության ապահովման միջոցառումների իրականացման համար: Հատուկ այդ նպատակով, հայտարարված մրցույթի հաղթող «Ջավախավտոգզա» ընկերությունը ձեռնամուխ եղավ Թիքքարի ճանապարհահատվածի կարգավորման աշխատանքներին՝ մոբիլիզացնելով համապատասխան տեխնիկա եւ աշխատուժ: Նշենք նաեւ, որ, ինչպես ասում են ճանապարհաշինարարները, երթուղին չի փակվի նույնիսկ ուժեղ ձյան եւ ձնաբքերի դեպքում, ինչը տեղի էր ունենում վերջին 30 տարվա ընթացքում, եւ տարածաշրջանի բնակիչները Թբիլիսի էին գնում եւ գալիս Բորժոմիով՝ 140 կիլոմետրով երկարացնելով ճանապարհը:

Ուրախալի է նշել, որ մեր մեծամասնական պատգամավորի ջանքերով կազմակերպված այդ գործը, ինչպես տեսնում եք, հաջող ընթացք ունեցավ, ինչը, համոզված եմ, ըստ արժանվույն կգնահատվի մեր տարածաշրջանի բնակիչների կողմից:

Նկարում.- Պատգամավոր Հենզել Մկոյանը (ձախից)՝ բուլդոզերավար Աշոտ Պողոսյանի հետ:



ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԱՄՆ

ՍԻՐԻԱՅՈՒՄ ՀՐԱԴԱԴԱ՞Ր...

Փետրվարի 22-ին հրապարակվեց Սիրիայում հրադադարի վերաբերյալ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի համատեղ հայտարարությունը, ըստ որի, հրադադարը ուժի մեջ կմտնի փետրվարի 27-ին, Դամասկոսի ժամանակով ժամը 00:00-ից:

ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման ողջունել է Սիրիայի շուրջ նոր պայմանավորվածությունը, որը ձեռք է բերվել Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի վճռորոշ դերակատարությամբ, եւ ընդգծել, որ այժմ կարեւոր է այն կատարել:

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի խոսքով, ձեռք բերված պայմանավորվածությունը «իրական քայլ է արյունահեղության դադարեցման համար»:

Դրա հետ մեկտեղ նա ընդգծեց, որ կրակի դադարեցման ռեժիմը չի տարածվում Ռուսաստանում արգելված «Իսլամական պետություն» եւ «Ջեբհաթ ան Նուսրա» ահաբեկչական կազմակերպությունների վրա: «Դրանց այսուհետեւ էլ հարվածներ կհասցվեն»,- հայտարարեց Պուտինը:

Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին բանաձեւի նախագիծ են ներկայացրել՝ ի աջակցություն Սիրիայում հրադադարի ռեժիմի, որը պետք է ուժի մեջ մտնի փետրվարի 27-ի կեսգիշերին:

ՍԻՐԻԱ

ԱՊՐԻԼԻ 13-ԻՆ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սիրիայի նախագահ Բաշար Ասադը երկրում խորհրդարանական ընտրությունների անցկացումը նշանակել է ապրիլի 13-ին:

Ընտրությունների ամսաթվի նշանակման վերաբերյալ տեղեկատվությունը հայտնվել է փետրվարի 22-ին, այն բանից հետո, երբ հայտնի է դարձել, որ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի նախագահներ Վլադիմիր Պուտինը եւ Բարաք Օբաման համաձայնության են հասել Սիրիայում հրադադարի հաստատման շուրջ:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ՄՆԱԼՈՒ ՀԱՆՐԱՔՎԵՆ՝ ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ

Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Քեմերոնը որոշում է կայացրել երկրի՝ Եվրոպական Միության կազմում մնալու հարցը հանրաքվեի դնել հունիսի 23-ին: Մեծ Բրիտանիայի վարչապետը հայտարարել է, որ խորհրդարանին կառաջարկի հանրաքվեն կազմակերպել հունիսի 23-ին:

«Մենք պետք է կատարենք ընտրությունը: Սակայն իմ խորհուրդը հետեւյալն է՝ Մեծ Բրիտանիան կլինի ավելի ուժեղ, անվտանգ եւ բարեկեցիկ երկիր, եթե լինի բարեփոխված Եվրամիության մասնիկը»,- ասել է Քեմերոնը:

ԱՄՆ

ՓԱԿՎՈՒՄ Է ԿՈՒԲԱՅՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒԱՆՏԱՆԱՄՈՅԻ ԲԱՆՏԸ

Պենտագոնն ամերիկյան կոնգրես է ներկայացրել Գուանտանամոյի բանտը փակելու ծրագիր: Այս մասին հայտարարել է ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման:

«Գուանտանամոյի բանտը չի ամրապնդում մեր անվտանգությունը, այլ ընդհակառակը: Մենք փակում ենք մեր պատմության մի գլուխը: Այն արտացոլում է դասերը, որոնք մենք քաղել ենք սեպտեմբերի 11-ից հետո»,- նշել է նախագահը:

Ենթադրվում է, որ բանտի 91 ազատազրկվածներից 34-ը կարող են ուղարկվել երրորդ երկրներ, իսկ մինչեւ 60-ը՝ ԱՄՆ:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀՈԲԵԼՅԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՊԱՏԻՎ ԱՌԱՋԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 95-ԱՄՅԱԿԻ

Փետրվարի 21-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, ի պատիվ Վրաստանի ժողովրդավարական Հանրապետության 1921 թվականի սահմանադրության 95-ամյակի, Թբիլիսիի սովորող երիտասարդների պալատում անցկացրեց ընդունելություն:

Այն բացեցին Գիորգի Մարգվելաշվիլին եւ Սահմանադրական դատարանի նախագահ Գիորգի Պապուաշվիլին: Ընդունելությանը ելույթ ունեցավ նաեւ Վրաստանի ժողովրդավարական հանրապետության կառավարության ղեկավար Նոե Ժորդանիայի թոռնուհի, Լեւելի «Քարթուլի կերա» կառավարիչ Իռեն Ցիցիշվիլին:

Առաջին սահմանադրության 95-ամյա տարելիցին նվիրված ընդունելությանը ներկա էին Վրաստանի գործադիր եւ օրենսդիր մարմինների, դիվանագիտական առաքելությունների, հասարակական եւ ստեղծագործական կազմակերպությունների ներկայացուցիչները:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Եվրոպայի ներդրումային բանկը (EIB) 150 մլն եվրո կհատկացնի Վրաստանի ենթակառուցվածքի զարգացմանը. ֆինանսական պայմանագրերն ստորագրել են հանրապետության ֆինանսների նախարար Նոդար Խադուրին եւ բանկի փոխնախագահ Լասլո Բարանիան:

EIB-ը 100 մլն լարի կհատկացնի «Վրաստանի քաղաքների եւ ենթակառուցվածքի զարգացման նախագծին», որի շրջանակներում, երկրի տարբեր տարածաշրջաններում կիրականացվեն ոչ մեծ նախագծեր: Այդ միջոցներով կնորոգվեն ճանապարհներ, փողոցներ, ջրամատակարարման համակարգեր ու կոյուղիներ, կվերականգնվի հեղեղումից տուժած Թբիլիսիի ենթակառուցվածքը: Նախագծի շրջանակներում, նաեւ պլանավորված է բարձրլեռնային առողջարանների զարգացումը: Նախագիծը նախատեսվում է ավարտել 2019 թվականին:

Բացի այդ, EIB-ը կմասնակցի Ջեմո Օսիաուրի-Չումաթելեթի ավտոճանապարհի 14,1 կիլոմետրանոց հատվածի շինարարությանը, որը կառուցվում է Արեւելք-Արեւմուտք տարանցիկ մայրուղու արդիականացման շրջանակներում: Մասնավորապես, Եվրոպայի ներդրումային բանկը 49,45 մլն եվրո կհատկացնի այդ ճանապարհի 5,8-կիլոմետրանոց տեղամասի շինարարությանը:

Եվրոպայի ներդրումային բանկը կապիտալ ներդրումներ է իրականացնում ջրային եւ ճանապարհային ենթակառուցվածքում, էներգետիկայի ոլորտում, գյուղատնտեսության, առողջապահության եւ կրթության բնագավառներում: Բանկի տարածաշրջանային գրասենյակը Վրաստանում բացվել է 2015 թվականի ապրիլին:

ՎՐԱՍՏԱՆ-ԳԵՐՄԱՆԻԱ

«ԸՆԴԳԾՎԵՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ»

Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն պաշտոնական այցով գտնվում է Գերմանիայում:

Այցի շրջանակներում, Վրաստանի ԱԳ նախարարը հանդիպումներ ունեցավ իր գերմանացի գործընկեր Ֆրանկ Վալտեր Շտայնմայերի, Գերմանիայի բունդեստագի պատգամավորների, Գերմանիայից Եվրոպայի խորհրդարանական ասամբլեայի ներկայացուցիչների, պաշտոնական այլ անձանց հետ:

Վրաստանի եւ Գերմանիայի ԱԳ նախարարների հանդիպմանը քննարկվեց Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարման ուղղությամբ Վրաստանում իրականացված բարեփոխումների ընթացքը: Միխեիլ Ջանելիձեն եւ Ֆրանկ Վալտեր Շտայնմայերը առանձնակի ուշադրություն դարձրին երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարների հարցին: Գերմանական կողմը կրկին անգամ հավաստեց իր աջակցությունը Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանման, երկրի եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին ինտեգրվելու միտումը:

ՈԼՈՐՏ

ԱՌԱՋԻՆԸ՝ ԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Անցկացվեց «Արեւելյան գործընկերության երկրներում բանտերի ծանրաբեռնվածության հիմնախնդիրներն ու դրան արձագանքելը» թեմայով գիտաժողովը, որտեղ քննարկվեցին Վրաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում եւ Հայաստանում պենիտենցիալ համակարգերում առկա իրավիճակը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի քրեա-կատարողական եւ պրոբացիայի նախարար Կախա Կախիաշվիլին, Վրաստանի պենիտենցիալ համակարգում իրավիճակը բարելավվել է: «Տարիներ շարունակ, 2012 թվականից մեր ոլորտում ինտենսիվ բարեփոխումներ են անցկացվում: Արդյունքում, մենք առաջատար դիրքեր ենք գրավում ետխորհրդային տարածքում: Քանի որ բոլոր չորս երկրներում այդ ուղղությամբ հիմնախնդիրներն ընդհանուր են, ուստի, մեր գործընկերների հետ միասին քննարկեցինք բանտերի ծանրաբեռնվածության հետ կապված հիմնախնդիրներն ու ոլորտի բարեփոխման հետ կապված հարցերը»,- հայտարարեց Կախա Կախիաշվիլին:

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

USAID-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԸ ՎՐԱՍՏԱՆԻՆ

Վրաստանի խորհրդարանի արտաքին կապերի կոմիտեն պաշտպանեց Վրաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ ինկլյուզիվ եւ կայուն տնտեսական աճի վերաբերյալ համաձայնագրի վավերացումը:

Պայմանագիրը նախատեսում է Ամերիկայի միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից այդ նպատակով Վրաստանին դրամաշնորհի տեսքով՝ 13,1 միլիոն դոլարի հատկացում: Այդ գումարը կարող է ավելացվել կամ նվազեցվել:

Նախագծում Վրաստանի մասնակցությունը կազմում է 4,4 միլիոն դոլար, որը նույնպես կարող է փոփոխվել՝ ելնելով դրամաշնորհի նվազեցումից կամ ավելացումից:

Նախագծի նպատակն է բարելավել տնտեսական կառավարումը, ամենուրեք ներդնել գլոբալ բիզնես-չափորոշիչներ, մեծացնել մրցունակությունը, բնական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը եւ ստեղծել շուկայական կողմնորոշում ունեցող աշխատատեղեր: Վերոնշյալ ակտիվությունները ներառում են գյուղատնտեսության մասնավոր հատվածի մրցունակության եւ բնապահպանության ուղղությունները:



ԿԱՆՑԿԱՑՎԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Այսօր՝ փետրվարի 27-ին, Վրաստանի նախագահի հրավերով կանցկացվի երկրի ազգային անվտանգության խորհրդի նիստ, որին կմասնակցի նաեւ երկրի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին: Նիստում քննարկվելու է Վրաստանի զինված ուժերի կառուցվածքի հետ առնչվող հարցը, որի շուրջ ելույթ են ունենալու պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին եւ գլխավոր շտաբի պետ Վախթանգ Կապանաձեն:

Ազգային անվտանգության խորհրդի նիստին դրա մշտական անդամներից կբացակայի միայն խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, որը գտնվում է գործուղման մեջ:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑՆ ԷՐ

Պաշտոնական այցով Ավստրիայում գտնվող Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելին հանդիպում ունեցավ ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Լամբերտո Զենիեռի հետ: Հանդիպմանը քննարկվեցին համագործակցության հետ առնչվող հարցերը: Զրուցակիցները անդրադարձան նաեւ տարածաշրջանային անվտանգության եւ Վրաստանի բռնազավթված տարածքներում եւ վարչական սահմանի երկայնքով ստեղծված իրավիճակի հարցին:

Կողմերը քննարկեցին նաեւ ապառազմականացման գործընթացը, որը ԵԱՀԿ-ի աջակցությամբ հաջողությամբ իրականացնում է Վրաստանը:

ԳՐԱՆՑՎԵԼ Է ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԱՃ

Վրաստանի ՆԳ նախարարությունը հրապարակել է ընթացիկ տարվա հունվարին իրավախախտումների վիճակագրությունը: Հրապարակված տվյալները ներառում են երկրի հետաքննչական բոլոր մարմինների՝ տվյալները:

Հրապարակած վիճակագրության համաձայն, հունվարին գրանցվել է 3183 իրավախախտում, որից բացահայտվել է 1211-ը: Բացահայտման տոկոսը կազմել է 3805: Նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, իրավախախտումների թիվն ավելացել է 3,95 տոկոսով:

ՄԱՀԱՓՈՐՁ՝ ՆԱԽԿԻՆ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԻ ԴԵՄ

Փետրվարի 26-ին Թբիլիսիի Սաբուրթալոյի գերեզմանատանը մահափորձ է կատարվել «Ազատ դեմոկրատներ» ընդդիմադիր կուսակցության առաջնորդներից մեկի՝ Վրաստանի եվրաինտեգրացման նախկին պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլու դեմ: Պետրիաշվիլին այցելել էր իր ընկերոջ՝ Լեւան Միքելաձեի շիրիմին:

Վրաստանի ՆԳ նախարարության տեղեկատվության համաձայն, անհայտ անձինք հարձակվել են Պետրիաշվիլու վրա, ծեծել նրան, իսկ այնուհետեւ կրակել ոտքերին: Հարձակվողները թաքնվել են: Հանցագործության դրդապատճառներն առայժմ հայտնի չեն:

Հիշեցնենք, որ Ալեքսի Պետրիաշվիլին եվրոպական եւ եվրաատլանտյան ինտեգրացման հարցերով պետնախարարի պաշտոնը թողել է 2014 թվականի նոյեմբերին, պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիայի սկանդալային պաշտոնաթողությունից հետո, ով գլխավորում է «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ. «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԲ ՍՐԲՈՑ Է»

Յուրի Վարդանյանը Վրաստանում հարեւան երկրի՝ Հայաստանի դեսպանն է: «Վերսիան» դիվանագետի ամբիոնն այս անգամ տրամադրում է այս ճանաչված եւ հեղինակավոր ծանրամարտիկին, ով, այսպես ասած, հիացած է վրացիների ջերմությամբ, բնությունով եւ մշակույթով:

- Մինչեւ Վրաստան գալը ի՞նչ տեղեկատվություն ունեիք մեր երկրի մասին, եւ Ձեր սպասումները համընկա՞ն իրականությանը:

- Որպես Վրաստանում Հայաստանի դիվանագիտական առաքելության ղեկավար՝ Վրաստան ժամանեցի 2014 թվականի հուլիսին: Կարճ ժամանակում երկրի նախագահին հանձնեցի հավատարմագրերը եւ ձեր երկրում ձեռնամուխ եղա Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի պարտականությունների կատարմանը: Անկեղծ ասեմ՝ իրականությունը լրիվությամբ արդարացրեց սպասումներս: Անձնական տպավորություններով եւ ծանոթների պատմելով՝ գիտեի, որ վրացիները ջերմ, բարյացակամ եւ անկեղծ մարդիկ են, եթե դրան ավելացնեմ բազմերանգ ու հիասքանչ բնությունը, նպաստավոր կլիման, գեղեցիկ քաղաքները, առանձնապես՝ հին Թբիլիսին, կարելի է ասել, որ Վրաստանը գերազանցեց բոլոր սպասումները: Այդ ամենի ֆոնի վրա դյուրությամբ ներգրավվեցի աշխատանքային ռիթմում եւ ժամանակին սկսեցի արժեքավոր, գործնական եւ անձնական հարաբերությունների հաստատումը:

- Հարաբերություններ հաստատելուց հետո, վրաց եւ հայ ժողովուրդների միջեւ ի՞նչ նմանություն նկատեցիք:

- Մեր միջեւ նմանության պատճառը մի կողմից աշխարհագրական հարեւանությունն է, որը, անտարակույս, մեծ ազդեցություն է գործել մեր խառնվածքի նմանության ու նաեւ մշակութային միասնությունը, որը հենվում է ինչպես քրիստոնեական ավանդույթների, այնպես էլ՝ կենսակերպի վրա: Բացի այդ, մենք միմյանց նման ենք, գուցեեւ, մի փոքր չափազանցված ինքնասիրությամբ եւ հավակնություններով, որը, իմիջիայլոց, խառնված է չարության բացակայությամբ եւ բարյացակամությամբ: Նույն հույսերն ունենք, ինչն էլ ավելի է բարդացնում մեր միջեւ տարբերություններ գտնել: Եթե հարցին կատակով մոտենանք, ապա կարելի է ասել, որ հայերն ու վրացիները միանման սիրում են սեղանի շուրջ նստել: Սակայն, հայերս գերադասությունը տալիս ենք ավելի ուժեղ խմիչքներին՝ կոնյակին, օղուն, իսկ վրացիները՝ գինուն: Իմիջիայլոց, ասեմ, որ ձեր խոհանոցը հիանալի է:

- Մեր երկրների միջեւ հարաբերությունները նույնպե՞ս ամուր են:

- Կարծում եմ, որ օբյեկտիվ դիտորդների համար մեր հարաբերությունների ամրության հարցում կասկածներ չպետք է ծագեն: Բանն այն է, որ, չնայած քաղաքական, տնտեսական եւ ռազմական տարբեր միությունների, մեր փոխհարաբերությունները հիմնված են փոխըմբռնման եւ փոխվստահության վրա: Դա արտահայտվում է նրանով, որ տարեցտարի աճում է պաշտոնական մակարդակով այցերի թիվը: Պարբերաբար անցկացվում են բարձր մակարդակով հանդիպումներ, տարբեր ոլորտների ու գերատեսչությունների միջեւ կապեր են հաստատվում: Թեկուզ վերցնենք վերջին օրինակը: Վերջերս Հայաստանը հյուրընկալեց Վրաստանի պաշտպանության նախարարին: Թինաթին Խիդաշելու եւ Սեյրան Օհանյանի հանդիպումից հետո, երկու երկրների պաշտպանության գերատեսչությունների միջեւ ստորագրվեց «2016 թվականին Հայաստան-Վրաստան համագործակցության ծրագիրը», որը նախատեսում է «ռազմական ոլորտում, ռազմական կրթության ուղղությամբ մասնագիտական նախապատրաստության եւ ռազմավարական ծրագրավորման ոլորտում փորձի փոխանակում»: Դժվար է թեկուզ համաշխարհային մասշտաբով ռազմական ոլորտում նման սերտ համագործակցության այլ օրինակ երկու երկրների միջեւ, որոնք չեն պատկանում նույն ռազմական միությանը: Ուրախալի է, որ նման սերտ համագործակցություն ունենք նաեւ մյուս ոլորտներում:

- Այդ թվում՝ ինչպես նշեցիք, մշակույթում: Վրաց մշակույթից առանձնապես ո՞ր ուղղությունն է Ձեզ դուր գալիս:

- Այս հարցին պատասխանեմ առանց մտածելու, ինչ խոսք՝ պարը: Վրացական պարերի երկրպագուն եմ իմ գիտակցական կյանքի նշանակալից հատվածից, երբ ծանրամարտում դարձա օլիմպիական չեմպիոն: Այդ ժամանակից սկսած, որտեղ էլ անցկացվեին օլիմպիական խաղերը, խորհրդային օլիմպիական թիմի մասնակիցներին աջակցելու եւ օժանդակելու համար օլիմպիական ավաններ էին այցելում ճանաչված դերասաններ, մշակույթի գործիչներ, ստեղծագործական կոլեկտիվներ: Հանգստի ժամերին նրանք իրենց ստեղծագործությամբ մարզիկներին հնարավորություն էին տալիս բեռնաթափվել մրցումների լարված գրաֆիկից եւ հաճելի տրամադրություն ստեղծել:

Ինչպես Նինո Ռամիշվիլին եւ Իլիկո Սուխիշվիլին սեր արթնացրին վրացական պարի նկատմամբ, ինչպես ծանոթացավ Վախթանգ Կիկաբիձեի հետ եւ բարեկամության ինչ դրվագներ է հիշում Ֆրունզիկ Մկրտչյանի հետ օլիմպիական չեմպիոն դիվանագետը:

1980 թվականին, մոսկովյան օլիմպիադայում իմ ելույթի նախօրեին, խորհրդային մարզիկների առջեւ ելույթ ունեցավ Վրաստանի ժողովրդական պարերի համույթը՝ Նինո Ռամիշվիլու եւ Իլիկո Սուխիշվիլու գլխավորությամբ: Նրանց ելույթն արտակարգ տպավորություն թողեց ինձ վրա: Ավյունը, պարի գեղեցկությունը հիասքանչ էին ու գրավիչ: Կարելի է ասել՝ նրանց կատարողական վարպետությունը յուրատեսակ «դոպինգ» դարձավ ինձ համար, ինչն էլ նշանակալից ավանդ ունեցավ իմ հաղթանակում: Այդ օրվանից վրացական պարերի երկրպագուն եմ եւ միշտ, երբ բախտ է վիճակվում դիտել վրաց պարողների ելույթը, հիացմունքի եւ բավականության զգացում եմ ապրում:

- Դերասանների թվում ֆավորիտներ ունե՞ք: Ո՞ր ֆիլմերն եք սիրում:

- Դերասանը, ինչ խոսք, Վախթանգ Կիկաբիձեն է, ֆիլմը՝ «Սիմինոն», որտեղ նա եւ իր գործընկեր ու բարեկամ Ֆրունզիկ Մկրտչյանը հիանալի դերասանական շնորհներով աչքի ընկան: Ավելին, քանի որ ինքս էլ անձամբ բարեկամություն էի անում Ֆրունզիկ Մկրտչյանի հետ, բախտ ունեցա անձամբ ծանոթանալ նաեւ Վախթանգ Կիկաբիձեի հետ, ում հետ այժմ էլ ջերմ, բարեկամական հարաբերություններ ունեմ:

- Հետաքրքիր կլիներ՝ պատմեիք Ֆրունզիկ Մկրտչյանի հետ հարաբերություններից որեւէ դրվագ:

- Նրա հետ բարեկամացանք, երբ օլիմպիական չեմպիոն դարձա, թեպետ մինչ այդ միմյանց ճանաչում էինք, հանդիպում՝ տարբեր միջոցառումների ժամանակ, որտեղ նրան հրավիրում էին՝ որպես ճանաչված դերասան ու ռեժիսոր, իսկ ինձ՝ որպես ճանաչված մարզիկ, քանի որ այդ ժամանակ ես արդեն աշխարհի եռակի չեմպիոն էի:

Հիշում եմ մի ծիծաղաշարժ դեպք, որը տեղի ունեցավ մինչեւ մեր բարեկամանալը: Մի անգամ իրար հետ հանդիպեցինք Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանում: Հերթական մրցման էի մեկնում, իսկ նա ինչ-որ տեղից էր վերադառնում: Բարեւեցինք: Այն մի քանի րոպեների ընթացքում, երբ զրուցում էինք, մեր շուրջը հավաքվեց մոտ 80-100 մարդ: Հանկարծ Ֆրուզիկի մեջ արթնացավ դերասանը եւ որոշեց խաղալ հասարակության հոգեվիճակի վրա: Չնայած, որ արդեն գիտեր, թե ուր եմ մեկնում, բարձրաձայն հարցրեց՝ ո՞ւր ես մեկնում: Ակնարկը հասկացա եւ, ելնելով նրա հմուտ դերասանական արձագանքից ծագած իրավիճակից, ասացի, որ մեկնում եմ Գերմանիա՝ միջազգային «Ֆոլկշտիմե» մրցաշարին մասնակցելու: Ի պատասխան, նա ասաց. «Գերմանիա՞... հիանալի է, Գերմանիայում ծանրաձողը թեթեւ է, անպայման կբարձրացնես»: Միայն տեսնել էր պետք, թե մարդկանց ինչպես հիացրեց այդ հանպատրաստից ծագած դրվագը, ինչպես ուրախացան նրանք, իսկ ես, պետք է խոստովանեմ, որ այն ժամանակ այնքան էլ լավ մարզական վիճակում չէի եւ մրցման էի մեկնում միայն թիմի համար: Հաջողության մեծ հույսեր չունեի, սակայն Ֆրունզիկ Մկրտչյանի կատակն այնպես տպավորվեց, որ տրամադրվեցի անգամ համաշխարհային նոր ռեկորդ սահմանել: Հենց այդ ժամանակ էլ բարձրացրեցի 210,5 կիլոգրամը: Այդ ռեկորդը երախտիքի զգացումով նվիրել եմ Ֆրունզիկ Մկրտչյանին:

Երբ մենք մտերմացանք, եւ ազատ ժամանակ էի ունենում, անպայման զանգահարում էի, հետաքրքրվում նրա գործերով, առողջությամբ: Այնպես բարեկամացանք, որ հաճախ էինք հյուրընկալվում միմյանց: Մի քանի տարի անընդմեջ միասին դիմավորեցինք Նոր տարին: Ծագումով երկուսս էլ Լենինականից ենք, եւ դա ավելի մտերմացրեց ու բարեկամացրեց:

Մեր վերջին հանդիպումը տեղի ունեցավ 1993 թվականին, Լոս Անջելեսում: Դա բավականին տխուր պատմություն է: «Ես արդեն աշխատում էի ԱՄՆ-ում, իսկ նա հյուրախաղերի էր եկել: Հանդիպեցինք ռեստորանում: Նա արդեն մտադիր էր վերադառնալ Հայաստան: Չվերթը Լոս Անջելեսից Երեւան էր թռչելու Փարիզի տարանցումով: Մինչ այդ, հաճախ էի նրան հորդորում խուսափել ալկոհոլից, սակայն այդ ժամանակահատվածում գիտեի, որ չէր խմում: Վատ տեսք ուներ: Նրան կամաց ասացի՝ չես խմի, իսկ նա իր սովորական լավատեսական ոճով բարձրաձայն, այնպես որ ուրիշներն էլ լսեին, անգլերեն պատասխանեց. Everything is Okay (ամեն ինչ լավ է): Միմյանց հրաժեշտ տվեցինք: Դառնացած՝ նրա ուղեկցին խնդրեցի զանգահարել, երբ Փարիզում վայրէջք կկատարեն: Զանգահարեց եւ ասաց, որ Ֆրունզիկը կամավոր խախտել է զսպվածությունը, նստել է սեղանի մոտ եւ ուժեղ ալկոհոլային խմիչք է օգտագործում: Սիրտս վատ բան գուշակեց: Իրոք, մի քանի ամիս անց, Ֆրունզիկ Մկրտչյանը վախճանվեց:

Նրա բնավորության դրամատիզմն այն էր, որ նրանում ներփակված էին կատակերգուի շնորհը եւ ներքին թախիծն ու վիշտը: Վերջինս անձնական հարաբերություններում հրապարակավ չէր արտահայտում, սակայն, ինչպես պատմեց նրա երրորդ կինը՝ Թամար Հովհաննիսյանը՝ տանը չէր կարողանում թաքցնել բնավորության այդ գիծը: Մարդը, որը աշխարի էր եկել մարդկանց ուրախացնելու եւ զվարճացնելու առաքելությամբ, նրա հոգում անսահման թախիծ ու վիշտ էր թաքնված...

- Պարոն Յուրի, ինչպե՞ս կգնահատեիք «Ղվավիլեբիս քվեղանա» երգի հետ կապված վերջին ժամանակների իրադարձությունը:

- Մանրամասներին տեղյակ չեմ, նման միջադեպերի մեկնաբանությունը դեսպանության իրավասության տակ չի մտնում: Հարցը կողմերը պետք է պարզեն իրավական ուղիներով: Անվիճելի է, որ մտավոր սեփականությունը պետք է մնա անձեռնմխելի:

- Նոր տարին դիմավորեցիք այստեղ, նմանություն նկատեցի՞ք մեր ավանդույթների միջեւ:

- Իրոք, Նոր տարին դիմավորեցի Վրաստանում, սակայն դեռեւս այնքան էլ ծանոթ չեմ վրացական ամանորյա ավանդույթներին, որ դրանք կարողանամ համեմատել հայկականի հետ: Ավելին, կարծում եմ հիմա էլ, չնայած որ, արդեն քառորդ դար է, ինչ անկախ պետություններ ենք, մեր ամանորյա ավանդույթներում շատ բան պահպանվել է Խորհրդային Միության ժամանակներից, ինչը դրանց շատ է նմանեցնում միմյանց: Ցանկանում եմ վրաց ժողովրդին մաղթել ամենայն բարիք, հաջողություններ, առողջություն, բարեկեցություն, խաղաղություն եւ կայունություն: Հայաստանի եւ հայ ժողովրդի համար Վրաստանի եւ վրաց ժողովրդի հետ բարեկամությունը սուրբ սրբոց է, եւ դա չի կարողանա սասանել ոչ մի կարիք, հիմնախնդիր, դիմադրություն եւ անբարյացակամություն: Դրանում համոզված եմ, եւ դա հավաստում է մեր ընդհանուր պատմությունը, անցիջում բնավորությունը, նաեւ դարերի ընթացքում հաստատուն քայլերով առաջընթացը ու հաղթահարած բազում արգելքները:

ՄԱԿԱ ԼՈՄԱՋԵ

«Վերսիա», 19-21 փետրվարի